ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/20

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Ապարանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ
Երրորդ անձ՝ «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Ապարանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի,
«Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գնումների համակարգողների ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 16.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ համարել Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով «գնումների համակարգողների ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ.-ի մարտի 10-ին թիվ 3 արձանագրության որոշման 1-ին կետը, 2021թ.-ի մարտի 12-ի թիվ 4 արձանագրությունը, ինչպես նաև 2021թ.-ի մարտի 12-ին գնումների պաշտոնական կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.03.2021թ.-ին:

17.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/20 համարի ծածկագիրը:

01.04.2021թ.-ին՝ ներկայացված գրավոր միջնորդության հիման վրա «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

24.03.2021թ.-ին, 01.04.2021թ.-ին և 09.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.04.2021թ.-ին:

2. «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ն 16.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Արագածոտն մարզի Ապարանի Համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2021թ. փետրվարի 26-ին գնումների համակարգողների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգին

մասնակցության հայտ են ներկայացրել թվով 5 (հինգ) մասնակիցներ, այդ թվում և «Արթուր Ավետիսյան Սամվելի» ԱՁ-ն (այսուհետ՝ Մասնակից), որի գնային ւսռաջարկը եղել է ամենացածրը, ընդ որում 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ավելի ցածր երկրորդ տողը զբաղեցրած մասնակցի գնային առաջարկից: Մասնակցի կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է լիազորված ներկայացուցիչը, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով մասնակիցը չի կարողացել սահմանված կարգով լիազորագիրը ներբեռնել armeps.am համակարգ: Պատվիրատուի կողմից Մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունը, միաժամանակ պատվիրատուի գնումների համակարգողի կողմից հեռախոսազանգի միջոցով Մասնակցին հաղորդվել է, որ անհրաժեշտ է ներկայացվելիք լիազորագրի հաստատման ամսաթիվը սահմանել Պատվիրատուին ներկայացնելու օրը: 2021թ. մարտի 9-ին Մասնակցի կողմից լիազորագիրը՝ հաստատված նույն օրվա ամսաթվով, ներկայացվել է Պատվիրատուին, սակայն Մասնակցի կողմից լիազորագիրը հաստատվել էր 2021թ. մարտի 4-ին, որը հավաստվում է այն հանգամանքով, որ լիազորված անձը նույնը օրը իր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատել է լիազորագիրը (կցվում է): Վերոնշյալով պայմանավորված մասնակցի կողմից ներկայացված հայտ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021թ. մարտի 10-ի N 3 արձանագրության որոշման 1-ին կետով գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն 2021թ. մարտի 9-ին գնումների պաշտոնական gnumner.am կայքում հրապարակել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ 18/21 ծածկագրով գնահատող հանձնաժողովի բացման նիստի» վերտառությամբ գնահատող հանձնաժողովի որոշում, որտեղ չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի հետևյալ կետերը.

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին ինչպես նաև նույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հետևյալ կետերը.

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Վերոնշյալ տվյալները՝ ներառյալ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներ, ներկայացված չեն նաև Պատվիրատուի կողմից 2021թ. մարտի 12-ին հրապարակված «Պայմանագիր կնքելու որոշման» մասին հայտարարության մեջ:

Հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 10-ին հաստատված N 3 արձանագրությամբ կայացվել է որոշում՝ հայտ ներկայացրած մասնակիցների հետ 2021թ. մարտի 12-ին վերելու գների նվազեցման շուրջ բանակցություններ, որով չի պահպանվել ՀՀ կառավարության 2017թ. N 526-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված ժամկետը, այն է՝ «բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը»:

Հրավիրված բանակցությունների արդյունքում (ինչպես արձանագրվել է Հանձնաժողովի կողմից) բանակցություններին մասնակցել է միայն «Գայանե Դանիելյան Արսենի» ԱՁ-ն, որի կողմից բանակցությունների արդյունքում ներկայացվել է նոր գնային առաջարկ՝ առանց էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը և ընդունվել է հանձնաժողովի կողմից և վերջինս ճանաչվել է «ընտրված» մասնակից: Այստեղ ևս Հանձնաժողովի կողմից չի պահպանվել Որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետը, այն է

«էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

«Գայանե Դանիելյան Արսենի» ԱՁ-ի կողմից գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների արդյունքում որպես վերջնական՝ պայմանագրի կատարման համար գնային առաջարկ, ներկայացվել է 1590000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, սակայն Պատվիրատուի կողմից որպես նախահաշվային գին մեկ ամսվա համար սահմանվել է 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Հետևաբար եթե Ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագիրը Պատվիրատուի կողմից սահմանված է եղել, որ ուժի մեջ է մտնելու 2021թ. ապրիլի 1-ին, իսկ դրանից ավելի շուտ ժամկետում պայմանագրի կնքումը գործնականում հնարավոր չէր իրականացնել, իսկ պայմանագրի կատարման ավարտ հրավերով սահմանված է եղել մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը, նշանակում է, որ «Գայանե Դանիելյան Արսենի» ԱՁ-ն հաղթող է ճանաչվել նախահուշվային գնից ավելի բարձր գնով՝ մեկ ամսվա համար 176666.7 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ յոթանասուն լումա, այսինքն նախահաշվային գնից (մեկ ամսվա համար) 17666.7 (տասնյոթ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ յոթանասուն լումա) ավել գնով, իսկ մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը մերժվել են նույն նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ ներկայացնելու պատճառով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Նույն օրենքի 30-րդ հողվածի 1-ին մասին համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկ:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին հւսմապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

40-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցներին տրված գնահատականների հավասարության դեպքում, կամ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա՝

ա. ընտրված ե հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով նվազագույն գնահատական ստացած բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը նվազագույն գնահատական ստացած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ամենաբարձր գնահատական ստացած մասնակցի գինը գերազանցում է գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է այդ մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքվելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած

ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական նորմերը՝ ակնհայտ է դառնում, որ Հանձնաժողովի կողմից ընդունված վերոնշյալ որոշումները հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:»:

Ելնելով վերոգրյալից, «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է չեղյալ համարել Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով «գնումների համակարգողների ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ.-ի մարտի 10-ին թիվ 3 արձանագրության որոշման 1-ին կետը, 2021թ.-ի մարտի 12-ի թիվ 4 արձանագրությունը, ինչպես նաև 2021թ.-ի մարտի 12-ին գնումների պաշտոնական կայքում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

3. <u>Ապարանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/3871-2021 գրությամբ դիմել է Ապարանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 18.03.2021թ.-ին թիվ 020/331 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ, տրամադրելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 17.03.2021թ.-ի գրության հայտնում եմ, որ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՔ-ՂՀԾՁԲ-18/21 ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգին (Այսուհետև՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Արթուր Ավետիսյան Սամվելի» ԱՁ-ն (Այսուհետև՝ Մասնակից):

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (Ականավորված) տարբերակով:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.6 կետի հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր:

Հարկ եմ համարում փաստել, որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ Մասնակցի հայտը ներկայացվել է լիազորզած անձի կողմից, սակայն հայտում բացակայում է Մասնակցի կողմից տվյալ անձին հայտ ներկայացնելու լիազորություն վերապահված լինելու վերաբերյալ փաստաթուղթ՝ լիազորագիր:

Կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ 42-րդ կետի համաձայն եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Մասնակցի կողմից ներկայացված Լիազորագրում որպես տրման ամսաթիվ է նշվել 09.03.2021թ.-ը, սակայն հայտը ներկայացվել է 04.09.2021թ.-ին, ակնհայտ է որ Մասնակցի կողմից լիազորված անձը տվյալ պարագայում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չուներ այդպիսի լիազորություն:

Մասնակցի կողմից լիազորագիրը www.armeps.am համակարգում առկա տեխնիկական խնդիրների պատճառով չբեռնելու հանգամանքի վերաբերյալ հայտնում եմ, որ այդ փաստարկը չի կարող դիտարկվել որպես իրականությանը համապատասխանող, քանի որ, Մասնակցի կողմից հայտը համակարգ բեռնվում է հայտի նախապատրաստման գործիքի միջոցով՝ պարտադիր բեռնվող դաշտերում համապատասխան փաստաթուղթ բեռնելու, ապա ամբողջ փաթեթը փաթեթավորելու միջոցով: Եթե մասնակիցը ներկայացնում է հավելյալ փաստաթուղթ՝ տվյալ պարագայում լիազորագիր, ապա պետք է այն դիմում հայտարարության ֆայլի հետ միաժամանակ բեռնվեր հայտի նախապատրաստման գործիքի համապատասխան դաշտում, ակնհայտ է որ եթե հայտում առկա է դիմում հայտարարությունը, ապա բացառվում է, որ կցված է եղել նաև լիազորագիրը՝ որը համակարգի խնդրի պատճառով բացված հայտում բացակայում է, ի վերջո համակարգը թույլ է տալիս ներբեռնել փաստաթղթերի ամբողջական փաթեթ, այլ ոչ թե առանձին փաստաթղթեր: Հետևաբար գտնում եմ, որ Մասնակցի ներկայացված փաստարկը ամբողջովին անհիմն է:

Մասնակցի կողմից բողոքով նշված գնումների համակարգողի կողմից հեռախոսազանգի միջոցով լիազորագրի հաստատման օր նշելու վերաբերյալ ներկայացված փաստի կապակցությամբ հայտնում եմ, որ այն բացարձակ ապատեղեկատվություն է չի համապատասխանում իրականությանը, բխում է Մասնակցի կողմից գնումների համակարգողի հանդեպ ունեցած անձնական վերաբերմունքից, և իր մեջ չի պարունակում որևէ ապացույց կամ իրավական հիմք, հետևաբար չի կարող դիտարկվել որպես բողոքի քննման համար էական նշանակություն ունեցող հանգամանք:

Բողոքում նշված՝ արձանագրությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ հայտնում եմ, որ հանձնաժողովի նիստի արձանագրությամբ ներկայացվել են ընթացակարգին առանչվող՝ անհրաժեշտ, տեղեկությունները և քանի որ վերոնշյալ հոդվածով սահմանված տեղեկությունների չներկայացնելը որևէ կապ կամ նշանակություն չունի Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման պայմանների հետ, հետևաբար գտնում եմ, որ բերված փաստարկը անհիմն է: Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ վերոնշյալ հոդվածով ներկայացված տեղեկությունների մի մասը չէր կարող ներառվել արձանագրության մեջ, քանի որ ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային եղանակով:

Բողոքում Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերության պահանջները խախտելու վերաբերյալ ներկայացված փաստի կապակցությամբ հայտնում եմ, որ 10.03.2021թ.-ին Մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չբավարարող /անբավարար/ և մերժվել է, իսկ հրավերի հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացված մասնակիցներին ծանուցվել է 12.03.2021թ.-ին կազմակեպվելիք բանակցությունների վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերության համաձայն բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան /10.03.2021 թ/ հաջորդող օրվանից /11.03.2021 թ/ երկրորդ /11.03.2021թ- 1-ին օր, 12.03.2021թ-2-րդ օր/ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը: Հարկ եմ համարում ընդգծել որ, վերոնշյալ պարբերությամբ նշված ժամկետներում չի նշվում, որ ծանուցման հաջորդ օրը չպետք է հաշվել որպես 1-ին օր, հետևաբար տվյալ պարագայում 11.03.2021թ-ը համարվել է 1-ին օր: Միաժամանակ հայտնում եմ, եթե նույնիսկ խախտվել է վերոնշյալ պարբերությամբ նշված ժամկետը՝ ինչը միանշանակ ասվել չի կարող, ապա դա կարող է խոչընդոտ հանդիսանալ միայն հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցների համար, որի մասին մասնակիցները կբարձրաձայնեյին: Տվյալ պարագային Մասնակիցը որևէ կապ չունի նշված ժամկետների հետ, հետևաբար բերված փաստարկը անհիմն է:

Բողոքով նշված ընտրված մասնակցի՝ «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ կողմից բանակցության արդյունքում առանց էլեկտրոնային թվային ստորագրությամբ գնային առաջարկ ներկայացնելու հանգամանքին, հայտնում եմ որ, 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ և ե պարբերությունների համաձայն յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող

է վերանայել իր գնային առաջարկը, բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցները: Վերոնշյալ կետում նշված է, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, սակայն նշված չէ, որ պետք է ներկայացնի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված գնային առաջարկ, տվյալ պարագայում մասնակիցը /«Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ/ վերանայել է իր գնային առաջարկը՝ գնահատող հանձնաժողովի համար ընդունելի տարբերակով, քանի որ բանակցության արդյունքում վերանայված գնային առաջարկ ներկայացնելու վերաբերյալ չկա որևէ կարգավորում: Միաժամանակ հայտնում եմ, որ իրատեսկան չի այն տարբերակը, որ բանակցության ներկա բոլոր մասնակիցները բանակցության ժամանակ իրենց հետ ունենան համակարգիչ և համապատասխան սարքավորում՝ Մասնակցի կողմից ցանկալի, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված գնային առաջարկ ներկայացնելու համար:

Բողոքով Մասնակցի կողմից ներկայացված՝ ընտրված մասնակցի /«Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ/ կողմից ներկայացված գնային առաջարկի վերավերյալ բերված փաստարկը առհասարակ անհիմն է, անիմաստ և գործի հետ կապ չունեցող, քանի որ Պատվիրատուի կողմից որպես նախահաշվային ընդհանուր գին է սահմանվել 1 600 000 ՀՀ դրամը՝ պայմանգրի կնքման և տվյալ դեպքում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021 թ.-ը մատուցվելիք ծառայությունների համար:

Մասնակինցերը՝ այդ թվում նաև «Արթուր Ավետիսյան Սամվելի» ԱՁ-ն, գնային առաջարկ են ներկայացրել նշված ժամանակահատվածի համար: Իսկ Մասնակցի կողմից մեկ ամսվա նախահաշվային գին ստանալու համար կատարված հաշվարկի, դրա հիման վրա ընտրված մասնակցի ներկայացված գնային առաջարկը նախահաշվային գնից բարձր որակելու հանգամանքի վերաբերյալ Պատվիրատուն որևէ ադեկվատ պատասխան չի կարող ներկայացնել: Գտնում ենք, որ Մասնակիցը ներկայացրել է մտածածին և սին փաստարկ, որը միանշանակ որպես գործի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանք դիտվել չի կարող:

Ներկայացված բողոքի 2-րդ կետով ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմնավորումների վերաբերյալ հայտնում եմ, որ Մասնակիցը ներկայացրել է

ուղղակի պատահայսնության սկզբունքով ընտրված իրավական ակտերից վերցված դրույթներ, որոնք բացարձակ կապ չունեն իր կողմից ներկայացված բողոքի հիմնավորումների հետ: Նշված կետերի ընթերցումից պարզ չի դառնում ի վերջո ի՞նչ միտք է ցանկանում արտահայտել Մասնակիցը:

Հաշվի առնելով վերոնշյալը գտնում եմ, որ Մասնակցի կողմից ներկայացված բողոքը ամբողջովին անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում, տվյալ պարագայում Մասնակիցը բողոքարկում է ոչ միայն պայմանագիր կնքելու որոշումը, այլ նաև հանձնաժողովի ողջ գործունեությունը՝ տվյալ ընթացակարգի շրջանակներում, այն պարագայում երբ Մասնակցի հայտը մերժվել է հանձնաժողովի 10.03.2021 թ.-ին տեղի ունեցած նիստին:

1. համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (Ականավորված) տարբերակով

Այսինքն, գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում մասնակիցները պարտավորվում են իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Սույն գործով 09.03.2021թ„ Արթուր Ավետիսյան Սամվելի Ա/Ձ-ն լիազորագիր է տվել ֆիզ. Անձ Նարինե Սարուխանյանին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի ՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Այսինքն, լիազորագրում հստակ, գրավոր կարգով պետք է նշվի այն լիազորությունը, որն իր փոխարեն լիազորվածը կարող է իրականացնել, ինչպես նաև այն ուժի մեջ է մտնում տալու օրվանից:

Հարգելի պարոն Օհանյան սույն բողոքի քննության շրջանակներում հարկ եմ համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը ո՞ր պահից է անձը համարվում լիազորված և ի՞նչ լիազորություններով է անձը օժտված լինում լիազորագրի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքացիական իրավունքները ն պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նան քաղաքացիների ն իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝ 1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում, քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հողվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն օրենքին, այլ իրավական ակտերին

կամ կողմերի համաձայնությանը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ է մեկ կողմի կամքի արտահայտությունը և մյուս կողմի ակցեպտավորումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 291-րդ հոդվածի համաձայն միակողմ գործարքը պարտականություններ է ստեղծում գործարքը կնքած անձի համար: Այն կարող է այլ անձանց համար պարտականություններ ստեղծել միայն օրենքով կամ այդ անձանց հետ համաձայնությամբ նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ միակողմ գործարքների նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են պարտավորությունների և պայմանագրերի մասին ընդհանուր դրույթները, եթե դրանք չեն հակասում օրենքին, գործարքի միակողմանի բնույթին և էությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի (լիազորված անձ) համար:

Վերոգրյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ լիազորագիրը իր բնույթով հանդիսանում է պարտավորությունների և իրավունքների մի ամբողջություն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոգրյալ խնդրին անդրադարձել է նաև Վճռաբեկ Դատարանն 18.07.2014թ.-ի իր թիվ ԵԿԴ/1447/02/12 գործում և արձանագրել է հետևյալը

«.. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի ուժով ներկայացուցիչը պարտավոր է պատշաճ իրականացնել լիազորագրով ստանձնած լիազորությունները պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պարագայում

վերջինս իր վրա կրում է դրա արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ թվում նաև պատճառված վնասի ռիսկը:..»

Հարգելի բողոքներ քննող անձ վերոգրյալ նորմերի ամբողջական և համակարգային վերլուծության լույսի ներքո կարող ենք հաստատապես ասել, որ 09.03.2021թ.-ին ներկայացված լիազորագիրն ուժի մեջ է մտել 09.03.2021թ.-ին և այդ նույն օրն էլ ակցեպտավորվել է, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված է եղել 05.03.2021թ., այսինքն 05.03.2021թ.-ի դրությամբ ֆիզ. Անձ Նարինե Սարուխանյանը թվային ստորագրությամբ ներկայանալու լիազորությամբ օժտված չի եղել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի «... հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ...»: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ Արթուր Ավետիսյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը եղել է հրավերին ոչ համապատասխան և տվյալ հայտի մերժումը խիստ իրավաչափ է:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ն 01.04.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ բանավոր կերպով ներկայացնելով իր դիրքորոշումն ու առարկությունները բողոքի հիմքերի ու հիմնավորումների վերաբերյալ:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Ապարանի համայնքապետարանի կողմից գնումների համակարգողների ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 05.03.2021թ.-ին:

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է լիազորագիրը:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

v. Ի պատասխան Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման, Ընկերությունը 09.03.2021թ.-ին ներկայացրել է նույն օրով թվագրված լիազորագիր:

vi. Հանձնաժողովի 10.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկվել և ուղարկվել է իր կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը, սակայն ուղարկված լիազորագիրը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտերը բացվել են 05.03.2021թ.-ին, իսկ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված լիզորագիրը տրվել է Նարինե Սարուխանյանին 09.03.2021թ.-ի դրությամբ, ուստի Նարինե Սարուխանյանը հայտի ներկայացման պահին չուներ նման լիազորություն: Ուստի, Հանձնաժողովը որոշել է Ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

viii. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ

կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, որոշել է նիստը կասեցնել և գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել 12.03.2021թ.-ին ժամը 10:00-ին, ք. Ապարան, Բաղրամյան 26 հասցեում:

ix. Հանձնաժողովի 12.03.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

x. www.gnumner.am համացանցային կայքում 12.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

xi. «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին գնահատող հանձնաժողովին ներկայացված լիազորագիրը, որով Նարինե Ստեփանի Սարուխանյանը լիազորվել է Ապարանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի անունից վավերացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ, թվագրված է 09.03.2021թ.:

xii. «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Ընթացակարգի հավելված 1-ը, գնային առաջարկը՝ հավելված 2-ը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված են Նարինե Սարուխանյանի անվամբ՝ 04.03.2021թ.-ին:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝

հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ

տարվա ընթացքում: Լիազորագիրը, որում նշված չէ դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

Հրավերի 2.6-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ապարանի համայնքապետարանի կողմից գնումների համակարգողների ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը՝ հավելված 1-ը, գնային առաջարկը՝ հավելված 2-ը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված են եղել Նարինե Սարուխանյանի անվամբ՝ 04.03.2021թ.-ին, իսկ ներկայացված հայտում բացակայել է լիազորագիրը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ին առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

Ի պատասխան Հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված շտկման վերաբերյալ ծանուցման, Ընկերությունը 09.03.2021թ.-ին ներկայացրել է նույն օրով

թվագրված լիազորագիր, որով Նարինե Ստեփանի Սարուխանյանը լիազորվել է Ապարանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի անունից վավերացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտերը բացվել են 05.03.2021թ.-ին, իսկ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված լիզորագիրը տրվել է Նարինե Սարուխանյանին 09.03.2021թ.-ի դրությամբ, ուստի Նարինե Սարուխանյանը հայտի ներկայացման պահին չուներ նման լիազորություն: Նշվածով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է Ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին հանձնաժողովին ներկայացված լիազորագիրը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այն բովանդակային առումով ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ լիազորագրին վերաբերող դրույթներից և չի հակասում վերջիններին: Ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ է տալիս լիազորված անձին Ապարանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի անունից վավերացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի իրավակարգավորումներից՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված 09.03.2021թ.-ի լիազորագիրը, որպես միակողմանի գործարք, համապատասխանում է նաև Օրենսգրքի՝ միակողմանի գործարքների ձևին և բովանդակությանը վերագրվող պահանջներին: Այն կնքված է փաստաթուղթ կազմելու միջոցով, արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի՝ Ա/Ձ-ի կողմից:

Ինչ վերաբերում է լիազորագրի ժամկետին և դրանով լիազորված անձին վերապահված իրավասությունների ծագման պահին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենսգրքի՝ վերը բերված դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, պարզ է դառնում, որ լիազորագրում նշված գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար, ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է

վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Ուստի լիազորագրում առկա դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը ներկայացուցչին լիազորագրում առկա իրավասությունների շրջանակում գործելու հնարավորության ծագման պահն է՝ սկիզբը:

Սույն գործով, «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ով թվագրված լիազորագիրը, թեև բովանդակային առումով համապատասխանում է Օրենսգրքի դրույթներին, սակայն, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ լիազորագրով Նարինե Սարուխանյանը 04.03.2021թ.-ի դրությամբ իրավունք չուներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու իր ներկայացվողի փոխարեն, իսկ արդեն 09.03.2021թ.-ին ներկայացրած լիազորագրով չէր կարող ծագել լիազորված անձի 04.03.2021թ.-ի դրությամբ ստորագրելու, ըստ այդմ՝ իր ներկայացվողին ներկայացնելու իրավասություն:

Ուստի սույն դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված՝ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը՝ հավելված 1-ը, գնային առաջարկը՝ հավելված 2-ը, ստորագրված չեն դրանք ներկայացնող անձի կամ վերջինիս լիազորած անձի կողմից, որպիսի պայմաններում հայտն ենթակա էր անբավարար գնահատման և մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ապարանի համայնքապետարանի կողմից գնումների համակարգողների ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում՝ գործել է իրավաչափ, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Անդրադառնալով «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ի կողմից բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն անհիմն է, քանի որ Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետը հստակ

սահմանում է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ բանակցությունների ժամանակ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը չի հանդիսանում հայտում ներառվող փաստաթուղթ, որպիսի պայմաններում այն ենթակա չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատման:

Ինչ վերաբերում է «Գայանե Դանիելյան Արսենի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի՝ գնման հայտով սահմանված նախահաշվային գնից բարձր լինելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից որպես գնման հայտով սահմանված նախահաշվային ընդհանուր գին է սահմանվել 1 600 000 ՀՀ դրամ գումար՝ պայմանգրի կնքման և տվյալ դեպքում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2021թ.-ը մատուցվելիք ծառայությունների համար, իսկ Մասնակիցը բանակցությունների արդյունքում ներկայացրել է 1 590 000 ՀՀ դրամ գումար գնային առաջարկ՝ 10 000 ՀՀ դրամ գումար ավելի պակաս, քանի Պատվիրատուի նախատեսած ֆինանսական միջոցներն են:

Անդրադառնալով Պատվիրատուի (գնահատող հանձնաժողովի) կողմից Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դրույթների խախտման վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով Հանձնաժողովի 05.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությունը (այսուհետ նաև՝ Արձանագրություն), թույլ է տալիս եզրակացնել, որ Ապարանի համայնքապետարանի կողմից Գնումների համակարգողների ծառայությունների

ձեռքբերման նպատակով 26.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԾՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստը տեղի է ունեցել հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետի սահմանված օրը՝ 05.03.2021թ.-ին:

Արձանագրությունը, այնքանով որքանով կիրառելի է գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքին, պարունակում է Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները: Իսկ ինչ վերաբերում է նույն հոդվածի արդեն 2-րդ մասով սահմանված դրույթներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքաբերի կողմից սույն բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց, առ այն, որ հայտերի բացման նիստում չեն հրապարակվել Օրենքի հիշատակված նորմում առկա տվյալներն ու տեղեկությունները:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արթուր Ավետիսյան Սամվելի» Ա/Ձ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/20 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**